Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԻ ԲԱՑՄԱՆԸ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ 1700-ԱՄԵԱԿԻՆ

(Լոնտոն, 1 Մարտ 2001թ.)

Յարգելի եւ սիրելի ներկաներ.

Սիրով եւ հոգու բերկրանքով ողջունում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ բոլորիդ Բրիտանական մեծահռչակ ու աւանդաշատ Գրադարանում հայկական եկեղեցական արուեստի այս հրաշալի ցուցահանդէսի բացման հանդիսաւոր առիթով:

Բրիտանական Գրադարանը տարիներ շարունակ մէկտեղում, կողք-կողքի համադրում ու պահպանում է մշակութային անհամար գանձեր՝ հետամուտ համամարդկային արժէքներով սերունդներ կրթելու եւ մարդկութեան կեանքում հոգեւորի կարեւորման առաքելութեանը: Հաւատարիմ իր վսեմ կոչմանը, Գրադարանն այսօր բազմահազար այցելուների ներկայացնում է հայոց հոգեւոր մշակոյթի արժէքները՝ գնահատելի ընծայ մատուցելով հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի կապակցութեամբ:

Ի նշանաւորումն ազգային մեր կեանքի մեծագոյն իրադարձութեան այս դարակազմիկ յոբելեանի՝ հայ հոգեւոր արժէքների ցուցադրութիւններ կազմակերպուել են աշխարհի մի շարք մեծ քաղաքներում, սակայն իւրաքանչիւր ցուցահանդէս միշտ առանձնայատուկ է, ինչպէս առանձնայատուկ են մարդկային հոգիները եւ միշտ եզակի՝ նրանց հանդիպումը:

Այսօր այստեղ հայ ժողովուրդը ներկայանում է բազմադարեայ իր մշակոյթով, մտածումներով ու ապրումներով, բարու եւ գեղեցիկի ընկալումով ու ճաշակով: Ցուցանմուշները, որոնք մեր առջեւ են, հայ հոգու մարմնաւորումներն են՝ արտայայտելով քրիստոնեայ մեր ժողովրդի հաւատն ու սէրը առ Աստուած, խաղաղութեան ու ստեղծարար աշխատանքի նրա երազները:

Հայ հոգուց պոկուած այս գանձերը կրում են նաեւ իրենց ստեղծող ժողովրդի տարագիր ճակատագրի կնիքը: Յաղթահարելով ժամանակ ու տարածութիւն, այսօր նրանք մէկտեղուել են կարօտի երկխօսութեան: Ունկնդիր լինենք նրանց զրոյցին, ու մեր հոգիները բաց կը լինեն հաւատի ու յոյսի այն մշտանորոգ լոյսի առջեւ, որով ծնունդ են առել այս արժէքները:

Սիրելի ներկաներ.

Արդարեւ, հայ ժողովուրդը Քրիստոսի՝ մարդուն պարգեւած փրկութեան լոյսն ընդունողների մէջ առաջին շնորհընկալներից է: Արարատի շուրջ սփռուած պատմական իր Հայրենիքում մեր ժողովուրդը 301թ. առաջինը պետական կրօն հռչակեց քրիստոնէութիւնը եւ այսօր էլ, 17 դար յետոյ շարունակում է լինել Քրիստոնէութեան հիմնամուր բերդն Արեւելքում: Իր լինելիութիւնը քրիստոնէութեամբ իմաստաւորելով է հայն ապրել ու արարել, փորձութիւնների մէջ անվարան հռչակել «Մահն իմացեալ անմահութիւն է» կարգախօսը եւ նահատակութեամբ բազմիցս վկայել իր հաւատարմութիւնը Քրիստոսին ու քրիստոնէական համեղբայրութեանը:

Այսօր հայ ժողովուրդը վերագտել է իր Հարենիքի ազատութիւնն ու անկախութիւնը: Անկախ պետականութեան իրողութիւնը ընդունելով որպէս Աստծոյ մեծագոյն շնորհ մեր հաւատքի ամրութեան համար, նաեւ համոզուած, որ մեր բոլոր յաջողութիւններն ու ձեռքբերումները շարունակութիւնն են 301թ. հրաշալի դարձի, մեր ժողովուրդը ջանում է

digitised by A.R.A.R.@

վերակառուցել ազատ իր Հայրենիքը, կերտել բարեշէն եւ օրինայարգ երկիր, որի դիմագիծը ստեղծարար աշխատանքն է ու եղբայրական սէրը բոլոր ժողովրդների նկատմամբ: Մենք փառք ենք առաքում առ Աստուած, որ մեր օրերում բաց են դռները քրիստոնէական եկեղեցիների՝ եղբայրաբար գրկախառնուելու, միասնաբար աղօթելու եւ մէկտեղ գործելու: Փառք Բարձրեալին, որ իր անկախութիւնը վերահաստատած Հայաստանը եւ Մեծն Բրիտանիայի Միացեալ Թագաւորութիւնը ներկայիս յարաբերութիւններ ունեն իրենց դեսպանութիւնների մակարդակով՝ ի շահ երկու պետութիւնների արդիւնաւէտ համագործակցութեան:

Մեր երկու քրիստոնեայ ժողովուրդների եղբայրութեան մի նոր վկայութիւն է այս ցուցահանդէսը, քանզի հայ-անգլիական առնչութիւնները դարերի խորքից են գալիս: Փառաւոր աւանդոյթներով այս երկրում մեր ժողովրդի զաւակները ապահով հանգրուան են գտել հարիւրամեակներ առաջ եւ այսօր էլ, վայելելով Բրիտանական կառավարութեան ու ժողովրդի բարի կամեցողութիւնը, ազատ են ազգային-եկեղեցական իրենց կեանքով ապրելու՝ որպէս լիիրաւ, վստահելի ու յարգարժան քաղաքացիները իրենց երկրորդ Հայրենիքի: Հայկական հնագոյն գաղթօջախներից մէկի եւ Հայոց հոգեւոր կեանքի վարչական միաւորի՝ Թեմի առկայութիւնն այս օրինեալ հողում այն հիմերն են, որով այսօր առաւել սերտ պիտի դառնան ու ընդլայնուեն մեր երկու՝ Հայ Առաքելական ու Անգլիական եկեղեցիների եւ մեր ժողովուրդների յարաբերութիւններն ու համագործակցութիւնը: Բրիտանական Գրադարանում բացուած այս ցուցահանդէսը նոյնպէս մէկ վստահելի ճանապարհ է մեր մշակոյթների մերձեցման, մեր ժողովուրդների փոխադարձ ճանաչման, վստահութեան ու եղբայրական յարաբերութիւնների արգասաւորման համար: Արդարեւ, միմեանց համար ընդունելի լինելու աւելի զօրեղ, միաժամանակ եւ աւելի հիասքանչ միջոց չկայ, քան հոգու շռայլումով միմեանց ընդառաջ գնալը:

Այս հանդիսաւոր եւ բերկրաշատ առիթով մեր Խորին գնահատանքն ենք բերում Գրադարանի պատուարժան Տնօրինութեանն ու նրա հայկական բաժնի աշխատակիցներին, որոնց ազնիւ նախաձեռնութեամբ ու անդուլ ջանքերով այսօր հնարաւոր է դառնում ցուցահանդէսի բացումը: Վերստին Մեր առանձնակի գնահատանքն ենք յայտնում Լոնտոնաբնակ Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններին, որոնք հովանաւորն են ինչպէս այս, այնպէս եւ նախորդ՝ Վատիկանում բացուած ցուցահանդէսների, նաեւ՝ շատ այլ ազգաշահ ու եկեղեցաշէն ձեռնարկումների: Փառք Բարձրեալին, որ յանձինս հայ բարերարների, հայութեան կեանքում արթուն է բարեգործութեան արարող ոգին, որ, հաւատաւոր գործերի փոխուած, զօրացել է մեր ժողովրդին եւ պատմութեան քառուղիներում եւ օգնել դիմակալելու բազում փորձութիւններ:

Համայն հայութեան հաւատի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որպէս Հայրապետ Ամենայն Հայոց, Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերել ցուցահանդէսի կազմակերպիչներին, բոլոր այստեղ ներկաներին, Անգլիոյ մշակութասէր ժողովրդին եւ ցուցահանդէսի բոլոր այցելուներին: Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Տիրոջ օրհնութեամբ ցուցահանդէսը ծառայի կեանքի՝ հոգեւորով իմաստաւորման, ժողովուրդների սիրոյ ու բարեկամութեան իր առաքինի նպատակին:

Թող Տէրը հաճութեամբ ընդունի Քրիստոնէական եղբայրութեան այս վկայութիւնը եւ հաստատուն ու պայծառ պահի Հայ Առաքելական ու Անգլիական եկեղեցիները, Իր հովանու ներքոյ միշտ շէն, բարգաւաճ ու ապահով պահպանի Մեծն Բրիտանիան եւ զօրացնի համագործակցութիւնը մեր երկու բարեկամ ժողովրդների ու պետութիւնների միջեւ:

Թող Բարձրեալի օրհնութիւնը իջնի համայն աշխարհին, եւ խաղաղ ստեղծագործելու աստուածային շնորհը ուղեկցի մեզ եւ յաւէտ ուղեղնշի մեր կեանքի ընթացքը:

digitised by A.R.A.R.@